№ 93 Յունիսի 14 (26) **1879** Յունիսի 14 (26) № 93

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համալսարանական երեք կուսակցութիւններ:—Ներքին տեսութիւն: Նամակ Ղարսից: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Բելգիա: Գերմանիա: Իտալիա: Արտաքին լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական: Սիրոյ որթեր:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն ժամանակից, երբ անդրկովկասեան և կովկասեան հայերը սկսեցին յաճախել բարձրագոյն դպրոցները, նրանք սկզբից դիմեցին թէ բուն ռուսաց համալսարանները և թէ Ռուսաստանի մէջ գտնվող միակ գերմանական համալսարան, այն է Դորպատի համալսարանը:

Ուրեմն դեռ երեսուն, քառասուն տարի սրանից առաջ բարձրագոյն ուսումը աւարտածների մէջ սկսեցին կազմակերպվել երկու որոշ կուսակցութիւններ՝ բուն ռուսաց համալսարանների մէջ աւարտածները և Դորպատի հին ուսանողները:

Այդ երկու կուսակցութիւնները միմեանցից որոշվում էին: Ս. Պետերբուրգի և Մոսկվայի մէջ աւարտածները զբաղվում էին միմիայն պետական ծառայութեամբ, իսկ Դորպատում աւարտածները աւելի ընկնում էին ազատ պարապմունքների ետևից, ինչպէս, օրինակ, ուսուցչութիւնը, լրագրութիւնը, երկրագործութիւնը, և այլն:

Սորանից յետոյ, մի տասն տարի սրանից առաջ, հայ երիտասարդութիւնը սկսեց դիմել և գերմանական համալսարանները: Գերմանական հայ ուսանողութիւնը, վերադառնալով հայրենիքը, շարունակեց հետևել Դորպատի հայ ուսանողութեան գործունէութեան եղանակին: Նրանցից ոչ մինը չը մտաւ պետական ծառայութիւն, այլ ամենքը դիմեցին ազատ պարապմունքներին:

Վերջին ժամանակները սկսեցին վերադառնալ մեր երկիրը և Ֆրանսիայում ուսում առած հայ երիտասարդներ:

Նրանցից ոչ մինը իր ուսումը աւարտած չէր և ոչ մին նրանցից մի որոշ հասարակական պարապմունքին ձեռնամուխ չեղաւ:

Այսպիսով Ռուսաստանի բուն ռուսաց համալսարաններում աւարտածները, պետական ծառայութեան մէջ են, նրանք համալսարանից վերադառնալով, քանի մի տարուց յետոյ ընկնում են ամբոխի բարոյական և մտաւոր մակերևոյթի տակ, ձեռք չեն տալիս որ և է ազատ պարապմունքին....

Դորպատի և Գերմանիայի ուսանողութիւնը մեծ մասամբ պարապում է ազատ արհեստներով, զբաղվում է հասարակական գործերով:

Երրորդ կուսակցութիւնը կազմում են Փարիզից վերադարձածները, որոնք դեռ շատ անորոշ և անգոյն դիրք են բռնում մեր հասարակութեան մէջ:

Ուրեմն մեր երկրի ինտելիգենցիան կազմված է ամենածայրայեղ, բազմատեսակ և իրար մէջ աններդաշնակ տարրերից: Այնպէս էլ միշտ անմիաբան հայերը, աւելի էլ միմեանցից ջոկվում են, միմեանց յարմարվել չեն կարող բոլորովին տարբեր ուղղութիւններին պատկանելով:

Ցանկալի է որ վերջապէս և մեր Թիֆլիսում համալսարան լինի: Գուցէ դա կը տայ մեր ինտելիգենցիային մի ամբողջութիւն, մի ընդհանուր գոյն, այնպէս որ մեր նոր սերունդը վերջապէս կը կարողանայ համերաշխ, ներդաշնակ և միաբան կերպով գործել հասարակական ասպարիզում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

4 յունիսի

Ղարսի կանայք իրանցից տաճկական նախապաշարմունքները և սովորութիւնները հեռացնելով սկսել են փոքր առ փոքր բարւոքել իրանց դրութիւնը ուսումնարան և գրադարան յաճախելով:

Անցեալ կիրակի յօգուտ գրադարանի վիճակահանութիւն կար ուսումնարանի դահլիճում, ուր ներկայ էին 20-ից աւելի հայ կանայք, որոնցից 100 րուբլիէն աւելի արդիւնք գոյացաւ: Սուրբ Գրիգոր Լուսաւորչի վիրապից ելնելու տօնի օրում ուսումնարանի հոգաբարձութիւնը և գրադարանի անդամները հանդիսաւոր կերպով ուսումնարանի տարեդարձը կատարեցին. կարդացվեցան ճառեր, եղան առենաբանութիւնք, երգվեցան երգեր: Այդ հանդիսին ներկայ էին 40-ից աւելի կանայք:

Տիկին Մարիամ Մկրտչեանը, որը տեղւոյս անուանի վաճառական Մենձեանի դուստրն է և Կարնւոյ համբաւաւոր հարուստ Մկրտչեանի հարսը, ուսումնարանին այցելութիւն գալով 100 րուբլի նուիրեց:

Ղարսում բացվեցաւ ժողովրդական դատարան, որի պաշտոնեաները անցեալ շաբաթ օրինաց համաձայն հանդիսաւոր կերպով երդվեցան: Ժողո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՐՈՅ ՈՐԹԵՐ

(Թարգմանութիւն)

(Շարունակութիւն և վերջ)

III

Խնդացին և պայծառ լուսինը փայլում էր մուգ կապոյտ և պարզ երկնակամարի վրա, նորա չորս կողմը փայլում էին գիշերային թագուհու ուղեկիցները՝ աստղերը, և հրեշտակաց դասի նման նայում էին երկրին և կարծես մի անհասկանալի լեզուով վիճում էին մարդկանց հետ: Գուցէ նոքա յայտնում էին մարդկանց նախախնամութեան միտքը…բայց չարը դեռ երկրի վրա թագաւորում էր…

Օմար-Ալիի հովիւ Սուրխայը նստած կրակի մօտ, ոչխարի մսից համեղ ընթրիք էր պատրաստում, իսկ ոչխարները դուրսը հանգստանում էին:

Չը յետացաւ արդեօք, մրմնջում էր ինքն իրան, կերակուրն արդէն պատրաստ է, իսկ ինքը չէ երևում: Շատ կարելի է իր սիրուհոյն գոհվեց, ինչպէս ես վաղուց է որ նկատում եմ, ոչ օր է ճանաչում, ոչ գիշեր, ոչ ժամ և ոչ ժամանակ:

—Եղբայր իմ, չը գիտես արդեօք, այստեղ ուր է Օմար-Ալին, լսվեց մի աղջկայ մեղմ ձայն, հովուի մրմունջը ընդհատելով:

Սուրխայը վեր թռաւ, տեսաւ իր ձախ կողմը մի անծանօթ աղջիկ կանգնած, զարմանքից ուշաբերվելով պատասխանեց:

—Ես նորա հովիւն եմ, քոյր, նա շուտով կը գայ, եթէ կամենում էք մօտ արէք կրակին:

—Եթէ դու կենտրոխացի ես և մեր սուրբ սովորութեան համեմատ ինձ քոյր անուանեցիր, ես քեզ հաւատում եմ…ասելով նստաւ կրակի մօտ:

Հովիւը կրակի լուսով անծանօթ նորեկի այնասութեան աքանչելի գեղեցկութիւնը նկատելով ապշեցաւ այնպէս, որ այլ ևս չէր կարող լսել և պատասխանել Գաղելօյի Օմար-Ալիի մասին արած հարցերին: Նա զմայլած նստած էր, նորա սիրտը բորբոքվում էր անծանօթ զգացմունքներով, որոց անունն անգամ չը գիտէր: Նա կորաւ և կարծես անհետացաւ բարձր ամպերի մէջ: Սկզբում նա երևակայում էր թէ Աստուծոյ մօտից թռչող հրեշտակը տանում է իրան դէպի երկինք և այդ ուղեկցոյցին հնազանդվելը նորան քաղցր էր թւում: Բայց հետզհետէ բացվում էին նորա աչքերը: Նա տեսաւ իր հրեշտակ ուղեկցոյցի երեսի վրա հազածին զգայարանքներ, որոնք արտասվում էին. բացի սրանից նորան երևացին մարդկային բոլոր զգացմունքներն ու կրքերը: Հովիւը իր առաջ տեսաւ մի անպաշտպան ու արտասւող օրիորդ:

Գաղելօն Օմար-Ալիի հովուին պատահելով շատ ուրախ էր. իր սիրելին արժանանալու յուսով նա նման էր հրեշտակի: Բայց տեսնելով, որ հովիւը իր բոլոր հարցերին չէ պատասխանում, այլ ապշած երեսին է նայում, օրիորդը շփոթվեցաւ և առաւել արտասվեց:

—Ա՛խ, Աստուած, Աստուած, ասաց նա, կեանքումս մի անգամ գոնէ արժանանայի Օմար-Ալիին տեսնելու, իսկ յետոյ թող մեռնէի:

—Դու արտասւում ես, գեղեցկուհի, Օմար-Ալիի բոլոր ազգականներին ես ճանաչում եմ, դու նորանցից ոչ մէկը չես, բայց այս վերջին ժամանակները Օմար-Ալին անդադար թէ քնի մէջ և թէ արթուն մի Գաղելօ օրիորդ էր երևակայում, արդեօք քո անունն է Գաղելօ:

—Այդ անունը, հառաչելով պատասխանեց աղջիկը, իմն է, բայց ես նորան կորցրել եմ, թողնելով իմ միակ մօրս և հայրական բնակարանս՝ ես նոցա եմ որոնում: Օմար-Ալին այս բանում կարող է ինձ օգնել, բայց դժբաղդաբար նա այստեղ չէ:

—Ես նկատում եմ, որ քեզ մեծ դժբաղդութիւն է հասել, իմ սիրելի Գաղելօ. միթէ ես Օմար-Ալիից պակաս մարդ եմ. նա յանդուգն է, քեզ, մի հրեշտակի ստիպել է խնդիրքով իրան դիմել, գիտենալով որ իրեն հարկաւորութիւն ունես, իսկ ես ինքս եմ խնդրում ներողութիւն ձեզ այս հանգամանքում օգնելու ու ծառայելու միշտ ու հաստատուն: Կարելի է դու Օմար-Ալիի վրա յոյս ունես, միայն գիտեցիր և հասկացիր, որ նա այն ստրկան կոպիտ է, որ քեզ կը խաբէ ու քեզ հետ երբէք չի պսակվի: Նա արդէն Ցամատխայում մի ուրիշ աղջկայ հետ նշանվել է, ճշմարիտ ասած և անկեղծ, որ ես քեզ վրա ցաւում եմ: Թոյլ տուր ինձ, խնդրեմ, առաջարկել մի սէր որ չէ նման Օմար-Ալիի սիրոյն, այլ այնպիսին որ ոչ ոք աշխարհումս չէ կարողացել զգալ. դու քո կողմից պատասխանիր այս սիրոյս և մենք կը լինենք բաղդաւոր: Երդվում եմ որ դէպի քեզ ունեցած սիրոյս ուժգնութիւնը…երևակայել անգամ չես կարող: Իսկ այն անպիտան և եղեռնագործ Օմար-Ալին փառնում է բոլորը ինչ որ հայրը վաստակել է, ես նորա պէս չեմ, ես ինքս եմ աշխատում հարստութիւն հաւաքել, որ մեզ երկուսիս ապահովացնի: Պատասխանիր շուտով, սիրելիս, դու համաձայն ես, ես նախադուշակում եմ…օ՜, ինչպէս բաղդաւոր եմ ես:

Այս ասելով Սուրխայը վերկացաւ տեղից ու կամենում էր գեղեցկուհուն գրկախառնել:

—Դու հովիւդ Օմար-Ալիի, բարկացած գոչեց օրիորդը, շուտով կարող ես տիրապետել իմ գլխակը, քան թէ ինձ, (ցոյց տալով սուրը ծածկած ձեռի մէջ) Թող ես աղքատ ու անբաղդ լինեմ, քան թէ նախատված: Դու արդեօք արժանի ես իմ ամուսին լինելու, թէ փորձում ես մի օրիորդի պատիւը, որին դու քոյր անուանեցիր: Օմար-Ալիի ունեցած սէրս անփոփոխ է, թող եթէ կամենում է նա ինձ թողնէ, բայց թողնել նորան ես չեմ կարող և փոխել նորան չեմ կամենում: Երկրորդ անգամ երդմնեցնում եմ քեզ, եթէ կարող ես գտիր այնպիսի մի միջոց, որով կարողանամ Օմար-Ալիին տեսնել:

Գաղելօյի այսպէս վստահութեամբ արտասանած խօսքերից յետոյ Սուրխայի երեսը նայել զարհուրելի էր: Նորա երեսը երբեմն ամօթանք, երբեմն յուսահատութիւն, երբեմն սէր, երբեմն էլ վրէժ էր արտայայտում. կորացած գլուխը, բորբոքած երեսը, վառվռուն աչքերը և ծանր շնչառութիւնը որ նա չէր կարող ինքն իրան հակառակել:

—Շատ բարի, ի վերջոյ ասաց Սուրխայը, սկսելով հալչել իր բոլոր զգացմանց սաստկութիւնից և աշխատել ցոյց տալ զղջման դէմք:

—Անհոգ եղիր, Գաղելօ, միայն ափսոս քեզ, Օմար-Ալիի վրա ունեցած սէրդ քեզ կը վնասէ. գնա, նստիր աղբիւրի մօտ, իսկ ես գնամ Օմար-Ալիին կանչելու:

—Այսպէս և չար մարդիկն ունեն կարեկցութեան զգացում դէպի տարաբաղդները, մտածում էր միամիտ աղջիկը և հնազանդվելով հովուին գնաց նստաւ ցոյց տուած աղբիւրի մօտ:

Կէս ժամից յետոյ Օմար-Ալին եկաւ, նա արխոտ էր, նրա շորերը պատառված էին:

—Կարծեմ շատ ուշացայ, ասաց նա հովուին տալով իր հրացանը և չը նկատելով Գաղելօյի ներկայութիւնը, բայց առանց պատճառի չէր, սարի մի կողմում սպանեցի մի եղջերու և յետոյ միւսներին հալածեցի, բայց չը կարողացայ հասնել նրա համար որ անտառի մէջ կորան. երբ ես վերադարձայ իմ սպանած եղջերուին կարգադրելու ինչպէս իմ գիտը, նկատեցի մի ահագին վագր, որ մօտե-

վրդական դատարանի առջև կան հասարակութեան ուշադրութեանը արժանի այնպիսի գործեր, որոնց արդարադատութեանը մեծ հետաքրքրութեամբ սպասում են շատերը։ Այնտեղ յայտնվելու է թէ ոքան խղճմտաբար են վարվել հասարակաց գործերում քաղաքի և նրա սահմանների ընտրեալ դատաւորները—մէճլիսները, և ոքան սուտ են նրանց մասին լսված չարախօսութիւնները։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 12 յունիսի

Ընթերցասիրելով ձեր օրագրի պատուական թերթերում յօգուտ «Արարատեան ընկերութեան» նուիրատուութեանց անուանական ցուցակները, ես ևս պարտք համարեցի ինձ օգնել նոյն ընկերութեանը ժողովելով իմ բարեկամներից և ծանօթներից երեսուն ր., որը անաւասիկ ուղարկում եմ առ ձեզ և խնդրում եմ հասցնէք ուր հարկն է և 'ի միամտութիւն նուիրատուաց, հրատարակէք հետևեալ ցուցակը։ Օր. Դարիայ Սահակեան 3 ռուբլ, օր. Մարիամ Շահմուրադեան 1 ր., օր, Եղիսաբէթ Մելիքեան 1 ր., օր. Վարդուհի Սանթրուսեան 1 ր., օր. Մարիամ Սուսաննեան 1 ր., օր. Աննա Սուսաննեան 1 ր., տ. Շուշանիկ Լազարեան 1 ր., տ. Վարդուհի Խուդադեան 1 ր., տ. Շուշանիկ Քարտաչեան 1 ր., տ. Կատարինէ Միրզայեան 1 ր., տ։ Շուշանիկ Շաբուրեան 2 ր., տ. Սօփիա Սափիեան 2 ր., տ. Եղիսաբէթ Խերօդինեան 3 ր., տ. Մարիամ Տէր-Նիկողոսեան 1 ր., տ. Նատալիա Խանդամեան 1 ր., տ. Եղիսաբէթ Սահակեան 1 ր., տ. Մարթա Տէր-Գրիգորեան 1 ր., տ. Աննա Հայրապետեան 1 ր., տ. Դարեայ Գուլեան 1 ր., տ. Եփեմեայ Խաչեան 1 ր., տ. Սօփիայ Դաղաչեան 1 ր., տ. Մարիամ Լորիս-Մելիքեան 1 ր. տ. Նատալիայ Միղրինեան 1 ր. տ. Մարիամ Բերոյեան 1 ր.։ Բոլորը 30 ր.։

Օր. Դարիա Գասպարեան Սահակեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Գանձակ, 25 մայիսի

«Մշակի» № 77 պարոն Հայկակի նամակը, հայր Ամբրոսիոսի Հայաստանում Ռուբինեան երկրագործական ուսումնական հիմնելու վերաբերմամբ, մեր քաղաքացոց վրա շատ անախորժ տպաւորութիւն թողեց։

Գանձակը ստանալով տեղեկութիւն թէ լրագիրներից և թէ Վեհափառ Հօր կոնդակից առաւել ևս ոգևոր վելով հայր Ամբրոսիոսի սրտաշարժ քարոզներից, ուշ չը դարձնելով ժամանակի դժբաղդ պատահարներին, որ մէկ կողմից վաճառականութիւնն է ընկած, միւս կողմից մորեխի պատճառաւ ամենայն պաշարեղէնների գները կրկնապատկված, չը խնայեց իր առատաձեռնութիւնը։ Ժողոված գումարը հասնում է 626 ր. 20 կ. որից 600 ռուբլ ուղարկված է Թիֆլիսի մանաժողովի անդամ «Փորձի» խմբագիր պարոն Յովհաննիսեանցին։

Քանի որ գործը այդ դրութեան մէջ է, իմ կարծիքով հարկ կայ պ. Յովհաննիսեանցի վրա որպէս մանաժողովի անդամ, որ կարելին փութով դորան վերաբերեալ ճիշդ տեղեկութիւններ ստանալով Կ. Պոլսի պատրիարքարանից, հաղորդէր ի միամտութիւն Ռուսաստանի հայ ժողովրդոց։

Ես խորհուրդ կը տայի մեր քաղաքացոց շուտով կազմել հասարակական վճիռ խնդրելով պ. Յովհաննիսեանից վերոյիշեալ 600 ր. չահեցողութեան մէջ պահել մինչև տեղեկութիւններ ժողովելը, իսկ եթէ տարաբաղդաբար կը հաստատվի պարոն Հայկակի տուած տեղեկութիւնները, այն ժամանակ այդ գումարը «Արարատեան ընկերութեան» միջոցով գործ դնել այդ նպատակով բոլոր ժողոված գումարի հետ մի այլ բարեգործական նպատակով։

Պ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՆՈՒԽՈՒՑ հաղորդում են, որ յունիսի 2-ին եկած կարկուտը մեծամեծ վնասներ է տուել. այն ոչինչ որ կոտրատել է շատ պտուհանների ապակիքը, այլ նա փչացրել է թութը, որ ամառվայ արդիւնքներից նշանաւոր է (սրանից օղի են պատրաստում) և խաղողի ողկոյզը, որ աշնան արդիւնքն է կազմում։ Սաստիկ քամին այդ կարկտի հետ շատ տեղեր արմատահան է արել մեծ մեծ ծառերը։ Կարկուտը մեծութեամբ աղաւնու ձուի չափ է եղել, տևել է մօտ 6 րոպէ և այդ կարճ միջոցում կէս թիզ բարձրութեամբ կարկուտը փողոցներում հեղեղներ է կազմել։ Նուխուն կից Ղշլաղ կոչված գիւղի մօտ մի թուրք հովիւ ֆէսով ծածկված գլուխը չը կարողանալով պաշտպանել կարկտից՝ ճանապարհին կարկտաթակ լինելով վախճանվում է։ Ասում են որ Ղշլաղի մօտ կարկուտը ընկուզի մեծութեամբ է եղել. թէ ոքան կենդանիներ է կոտորել դեռ յայտնի չէ։

—

Նոյն տեղից գրում են, որ այս տարի մկներ է քիչ վնաս չը տուին Նուխուն. այսօր մօտ 30 գիւղ, որ Նուխու առաջին հացաբեր գիւղերն էին, մի կանաչ արտի կարօտ են։ Գիւղացիք այս չարիքի առաջը առնելու համար դիմել էին գաւառապետին և խնդրել, որ մի երկու մարդ ուղարկի Պարսկաստան՝ հռչակաւոր մուկ-հալածող փիրի (սուրբ) ծառի փայտից բերելու որպէս զի հեռանան մկները իրանց դաշտերից, և թէպէտ գաւառապետը Նրանց խնդիրքը չը մերժելով 300 ռուբլ չափ փող հաւաքեց ու մարդիկ ուղարկեց այն փայտից բերել տուեց և տնկեցին արտում, բայց մինչև օրս մկները էլի չը հրաժարվեցին Նրանց դաշտերից։

—

Անցեալ օրերս Հալաբարում մի տիկին երեկոյեան պարահանդէսից վերադառնալով տուն, չորերը հանելու ժամանակ անզգուշութեամբ վայր է ձգում լամպան, որից և վարվում են հագի չորերը։ Ցանը ոչ ոք չէ լինում, տիկինը օգնութիւն կանչելով վազում է դէպի պատշգամբը և այնտեղից էլ իրան վայր ձգում։ Մինչև օգնութիւն հասնելը, բացի գլուխը ամբողջ մարմինը այրվում է։ Խեղճը երեք օր այս ցաւալի դրութեան մէջ է եղել։ Նրան շաբաթ օրը թաղեցին։

—

Պ. Ն. Տէր-Ղևոնդեանը խնդրում է մեզ յայտնել, որ «Մայրենի լեզուի» առաջին տարին արդէն մամուլի տակ է և մինչև յուլիսի տասը լոյս կը տեսնի եօթերորդ տպագրութեամբ, և առանց յետաձգութեան կուղարկվի նոցա, որոնք պատուիրած ունեն այդ գրքից։

—

«Մայրենի լեզուի» առաջին տարին, տաճկահայոց բարբառի վերածած՝ տպագրվում է և մօտ օրերս բոլորովին պատրաստ կը լինի և կուղարկվի «Արարատեան» ընկերութեան, որի օգտին և տպագրված է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵԼԳԻԱ

—

Տարբական ուսման հարցի մասին եղած վիճաբանութիւնները վերջապէս վեց երկրատև շաբաթներից յետոյ հպիւ հաղ վերջացան։ Այսպէս էր մի ընդդիմադրութեան ցանկութիւնը, որը խօսում էր միայն նրա համար, որպէս զի խօսէ։

Այս հարցի զարթելու հէնց առաջի օրից սկսած կղերականները, որոնք իրանց գոյութեան պայմանը միայն հին օրէնքի մէջ էին տեսնում, հաստատ վճռեցին, որ ինչ էլ որ պատահի, աշխատեն, թափեն բոլոր իրանց բարեկամներն ու ազգականները յուսահատվեցան, կուրծքերին էին խփում ու եղունգներով երեսները չանգռում։

—Այսպիսի տխուր դէպք դեռ մեր երկրում չէ պատահել, ասում էին ալևորները։

—Իրաւ է, հարցնում էր մէկը, որ Գաղելոյի մայրը Արգունում խեղդվել է։

—Իրաւ է, պատասխանեց միւսը. էլ ինչու համար նա ապրէր։

Իսկ Մահմուտն Իբրահիմի հետ, որոնք պատճառ դառան այս դառն եղելութեան, Շամիլի ձեռքն ընկան, որ հրամայեց գլխատել նրանց։

—Իսկ հովիւ Սուրխայի մարմինը...

Նրա մարմինը հողը չընդունեց, ինչպէս և Ալլահը նրա հոգին չընկալաւ. առաւօտեան դատ նրա ոսկերոտիքը գազաններից պատառոտված ու քրքրված։

V

Երկու կենտրոնացի սիրահարների սոսկաբեր մահուանից յետոյ անցաւ մի քանի տարի, յետոյ զարմանալի դէպքով նրանց գերեզմանի վրա խաղողի երկու որթեր բուսան, մէկը միւսից մարդու երկարութեամբ հեռու, հասնելով մօտակայ ծառին երկուսն էլ միմեանց հետ հիւսվել էին, մի խօսքով փաթաթվել և պառկել էին այնպէս, ինչպէս Օմար-Ալին և Գաղելօն։ Այս ճիւղերի զարմանալի հիւսուածքը ժողովուրդը Աստուծու հրաշք ընդունեց, սրբեց ընդհանուր պատուով այն տեղը, որ հիմա կենտրոնացում բոլոր նորապսակները հարսանեաց հանդէսը վերջանալուց յետոյ դալիս են սուրբ գերեզմանի մօտ և «Սիրոյ Որթերի» առաջև միմեանց հաւատարիմ մնալ ուխտ անում։

Մարուքէ Կոստանեանց

վրեան համար, երկինք ու երկիր, սարեր ու անտառներ, եղէք վկայ թէ այստեղ ինչեր կը պատահեն... Այս խօսքերն ասելուց յետոյ իր թշնամուն գետին տապալեց ու լայն թրովը սպանեց։

—Մնում է և մի հաշիւ, շարունակեց նա, հարկաւոր է մի յիշատակ թողնել մեր երկուսի վրա. ես ոչխարներ շատ ու շատ ունեմ, ասաց և իր ամենալաւ ոչխարներից 12 հատը մորթոտեց,—այժմ ես վերջացրի, աւելացրեց նա չղթելով ծնկների վրա Գաղելօի դիակի մօտ, բայց ես քեզ ոչինչ արժանի բան չեմ արել, ինձ մնում է միայն իմ կեանքս և ես ահա զոհում եմ քեզ, Գաղելո...ասաց ու սուրը Գաղելօի սրտի միջից անցնելով այնպէս սեղմեց որ խրվելով անցկացաւ իր սրտի մէջն ևս։

IV

Արգուն գետի ափերի մօտ գտնված սարերի ստորոտում մեծ ձիւների մէջ տեղով ճանապարհորդի առաջև երևում է մի գեղեցիկ դաշտ՝ ծածկված ճոխ ու փառահեղ բուսականութեամբ և գոյնզգոյն ծաղիկներով։ Այնտեղ հին մզկիթի աւերակների մօտ հաւաքվել էր ժողովրդի բազմութիւն ոչ թէ սովորական տօնի պատճառով, այլ ամենի երեսին երևում էր խորին տրամութիւն. ժողովուրդը կատարում էր դամբանական ծէսը, գետնի վրա տարածված էին երկու ճոխ հագնված դիակներ, նրանց մօտ փորված էր լայն գերեզման և մօլլան ննջեցեալների վրա կարդում էր տրամագին և երկարաձիգ կերպով հրաժարական աղօթք։ Օմար-Ալին և Գաղելօն պառկած էին այնպէս, ինչպէս որ կայն միմեանց գրկում, երեսների կարմրութիւնը և ժպիտը, որոնց մահը դեռ չէր խլել, կարծել էին տալիս թէ այս երկու զոյգը նոր էին պառկել ամուսնական առագաստը, միայն երբ մօլլան աւարտեց աղօթքը ու զոհերը գերեզման մտան, ամենքի լացը, գոռիւն գոչիւնը չորս կողմը բռնեց. ներկայ գտնված ամբոխի մէջ հանգուցեալների ծնողքը ու եղբայրները, կուրծքերին էին խփում ու եղունգներով երեսները չանգռում։

—Այսպիսի տխուր դէպք դեռ մեր երկրում չէ պատահել, ասում էին ալևորները։

—Իրաւ է, հարցնում էր մէկը, որ Գաղելօի մայրը Արգունում խեղդվել է։

—Իրաւ է, պատասխանեց միւսը. էլ ինչու համար նա ապրէր։

Իսկ Մահմուտն Իբրահիմի հետ, որոնք պատճառ դառան այս դառն եղելութեան, Շամիլի ձեռքն ընկան, որ հրամայեց գլխատել նրանց։

—Իսկ հովիւ Սուրխայի մարմինը...

Նրա մարմինը հողը չընդունեց, ինչպէս և Ալլահը նրա հոգին չընկալաւ. առաւօտեան դատ նրա ոսկերոտիքը գազաններից պատառոտված ու քրքրված։

V

Երկու կենտրոնացի սիրահարների սոսկաբեր մահուանից յետոյ անցաւ մի քանի տարի, յետոյ զարմանալի դէպքով նրանց գերեզմանի վրա խաղողի երկու որթեր բուսան, մէկը միւսից մարդու երկարութեամբ հեռու, հասնելով մօտակայ ծառին երկուսն էլ միմեանց հետ հիւսվել էին, մի խօսքով փաթաթվել և պառկել էին այնպէս, ինչպէս Օմար-Ալին և Գաղելօն։ Այս ճիւղերի զարմանալի հիւսուածքը ժողովուրդը Աստուծու հրաշք ընդունեց, սրբեց ընդհանուր պատուով այն տեղը, որ հիմա կենտրոնացում բոլոր նորապսակները հարսանեաց հանդէսը վերջանալուց յետոյ դալիս են սուրբ գերեզմանի մօտ և «Սիրոյ Որթերի» առաջև միմեանց հաւատարիմ մնալ ուխտ անում։

Մարուքէ Կոստանեանց

ցաւ, նա ուշադրութիւն չը դարձրեց, այլ հանգիստ սկսեց պատառել եղջերուի մարմինը, ու սիրտը դուրս քաշել որ համեղ կտորով բաւականութիւն ստանայ։ Ես ցանկանում էի որ իմ նախաճաշիկին վճարէր իր մորթով, հրացանս արձակեցի բայց գնտակը փորին դիպաւ. նա աւելի կատաղեցաւ և իմ վրա յարձակվեցաւ, մինչև որ ես սրովս նրա գլուխը ճեղքեցի, նա վիրաւորեց ինձ իր ճանկերով։ Արդէն գիշեր էր, վաղը մենք կը գնանք միասին այնտեղ, բայց ինչպէս շոք է ինձ համար, բեր ինձ, Սուրխայ, աղբիւրից ջուր։ Քեզ եմ ասում, կրկնեց նա բարկացած, տեսնելով որ հովիւը ուշք չէ դարձնում իր խօսքերին։ Արդեօք ինչու համար ես այդտեղ մռմռում, հիւանդ ես թէ բարկացած, բայց ձեր դիւական ցեղի մէջ կարծես ընական է, անարգ հոգի, բեր ինձ, ասում եմ, ջուր։ Ինչպէս կը ցանկայի, ասաց նա հառաչելով և կրակի մօտ պառկելով, որ պատահէի մի մարդու որ պարզ հոգւոյ ու բնաւորութեան տէր լինէր, ես կը հաւատայի նրան ոչ թէ բոլորը ինչ որ ունեմ, այլ և իմ սէրը և այս բօպէիս կուղարկէի նրան տեղեկանալու թէ ինչ եղաւ իմ Գաղելօն, սիրում է նա ինձ, թէ ոչ. բայց այս չունը ոչ մի տեղ չի գնայ, նա ծուլանում է մինչև անգամ մի քանի քայլ անել ջուր բերելու համար, չունը սրանից աւելի լաւ է, նա հաւատարիմ է, նա սիրում է նրան, ով որ նրան կերակրում է, իսկ իմ հովիւը ինչքան էլ ես նրան պատում եմ, նա այնքան աւելի ինձ վրա նախանձում է. յայտնի է արդէն, որ Աստուած ստեղծեց աշխարհը այնպէս, որ եթէ նախանձոտ մարդիկ չը լինէին, բարի մարդիկ էլ չէին լինի։

Հեռուից երևեցաւ Սուրխայը առանց ջրի։

—Երևի մեր աղբիւրը չորացաւ, կամ բարկութիւնից կոտրեցիր փարչը, հարցրեց Օմար-Ալին։

—Լաւ էր, եթէ չորանար։

Զար հոգին է նրան բռնել, նայենք որ մեզ չը հալածի եթէ այստեղից մենք չը հեռանանք, նա խլեց ձեռիցս փարչը և քիչ մնաց որ ինձ սպանէր։

—Ապա տեսնեմ նա ինձ հետ ինչպէս կը վարվի, ասաց Օմար-Ալին և վերառնելով հրացանը վազեց դէպի աղբիւրը։ Աղբիւրի մօտ նա նկատեց մի սև բան։

Ո՞վ ես դու, ինչու ես իմ աղբիւրի մօտ նստել, գոռաց Օմար-Ալին, եթէ գազան ես այդտեղից հեռացիր, իսկ եթէ մարդ ես պատասխանիր։

Պատասխան չը կար։

—Պատասխանիր, կրկնում եմ եթէ ոչ կարձակեմ հրացանս, ասաց ու կենտրոնացին հրացանն արձակեց. լսվեցաւ նրա ձայնը, այդ րօպէում մատաղ աղջկայ ձայնը Օմար Ալիի հոգւոյ միջից անցնելով, անցաւ ականջին, կենտրոնացու բերանից նոյնպէս յուսահատութեան ձայն թռաւ, նա իր արածը զգաց, վազրի նման յարձակվեցաւ անբաղդ զոհի վրա, գրկախառնեց մեռած Գաղելօյին, հրացանի գնտակը նրա սրտի միջով էր անցել։ Սարսանված Գաղելօն մահուան ժամանակ զօրեղ յանդիմանութեամբ, թուլացած ձայնով հովիւ կարողացաւ արտասանել. «Օմար—Ալի, ես ինքս կամենում էի քեզ մի անգամ տեսնելուց յետոյ մեռնել, իմ քո վրա ունեցած սէրս մահուանս բօպէում նոյնպէս չարունակվում է...նրա սառը ձեռը մնաց յուսահատ երիտասարդի սրտի վրա, հոգին փչեց նա։

—Նա մեռաւ... ասաց Օմար-Ալին հեռացնելով իր շրթունքները մեռած աղջկայ սառն երեսի վրայից, բայց Աստուած ստեղծելով սէրը չի կամենայ որ իրար սիրողները միմեանց թողնեն...Գաղելո, մենք չենք բաժանվի... և բերելով մեռածի դիակը դրեց կրակի մօտ։ Այս բօպէում իրանից ոչ հեռու տեսաւ նա հրացանի կայծակ, նա ճանաչեց իր հովիւ Սուրխային, որ կամենում էր իր դիտաւորութիւնը կատարել։ Օմար-Ալին յարձակվեցաւ չարագործի վրա, խլեց նրա ձեռից հրացանը. «դու չես կարող քո վրէժը հանել, գոչեց նա, չար հոգիքը քեզ փոխեցին, ես վրէժխնդիր եմ Գաղելօի ու իմ

քիչ էր մնացել, որ կործանէին նոյն իսկ ամբողջ կառավարութիւնը. նրանք այնքան մեղքեր բարձեցին նրա վրա. էլ ինչ մնաց որ նրանք չասացին. նրանք ամբողջ երկիրը ահագին տագնապի (!) մէջ գցեցին: «Անաստուած ուսումնարաններ», «անհաւատ ուսուցիչներ», «անաստուած օրէնսդիրներ» և հազար ու մի աստուածաբանական նզովքներ:

Ցարգելի կղերականների կարծիքով, ժողովուրդը արդէն դատնվում էր կատաղած տրամադրութեան մէջ, էլ ո՞վ ուրեմն ուշադրութիւն կը դարձնէր ձախակողմեան մի քանի սոփեստների խօսքերին, և աջակողմեան Դէմոմթենէսները ի՞նչու չը պիտի կարողանային յաջողութիւն ունենալ: Եկեղեցին և Աստուած կօրհնեն նրանց ճառերը: Էլ ո՞վ կարող էր այնուհետև նրանց ընդդիմադրել:

Ահա թէ ինչ էր մտածում աջակողմը իր մենախօսութիւնների ու առանձին ժողովների մէջ: Եւ կատարեալ վստահութեամբ, որ յաջողութիւնը անպատճառ իր կողմը կը լինի, նա պատերազմ էր յայտնել, գոնէ առանց նեղութիւն քաշելու մի նախագիծ կազմել: Տխուր անզգուշութիւն. ճակատագիրը ուրիշ կերպ տնօրինեց. Ֆրանսիական առածը ասում է. «L'homme propose, Dieu dispose» (մարդս մտադրվում է, Աստուած կարգադրում է): Այսպէս էլ պատահեց կղերականների մտադրութեան հետ:

Սա մի այնպիսի հարց է, որ փոխանակ 5-6 օրվայ մէջ վերջ ստանալու, մենք տեսնում ենք մի սարսափ դցող ցուցակ հռետորների, որոնք ամենքն էլ կամենում են խօսել. ինչ ասած, մարդուս բնութիւնն այսպէս է, ամենքն էլ կամենում են հռետորներ, Դէմոսթենէսներ ու Վիրգիլիոսներ դառնալ. ասում են որ մանաւանդ կղերականները դրանց շատ են սիրում:

Բէլգիայի ապագայ սենդի որդիքը, երբ որ կը կարդան 1879 թ-ի երկու հակառակ կուսակցութիւնների ճառերը, ինչպէս որ ներկայ սերունդը կարդում է 1842 թ-ական-նինը, այն ժամանակ նրանց վրա զանազան տպաւորութիւն կը գործեն այդ հակառակ ճառերը: Նրանք այնտեղ կը տեսնեն, որ մի զօրաւոր շունչ ոգևորում ու խրախուսում է ձախակողմեանների խօսքերը: Նրանք կը զգան որ այդ խօսքերի մէջ թնդում է մի ներողամիտ ժողովրդի ոգին: Նրանք կը տեսնեն, որ ներողամտութեան բարի հրեշտակը, թեւերը տարածած, Աթէնասեան վահանը ձեռքին պաշտպան է կանգնել այդ պատգամաւորների սուրը ու խաղաղասէր սկզբունքներին: Միւս կողմից նրանք կը տեսնեն թէ ինչպէս անդրալեռնային կղերականները, հաւատարիմ մնալով սուրբ Վատիկանին տուած երդումին, աշխատում են աղաւաղել քրիստոնէական դաղափարների ամենասուրբ սկզբունքներն անգամ: Ոչ, Բէլգիան անաստուած չէ. նա երբէք չէ կարող անաստուած լինել. նա կամենում է ապրել աւետարանական սուրբ-սուրբ հիմունքների վրա, միայն նա չէ կամենում այս կամ այն ինչ դաւանութեան պատկանող ուսումնարաններ ունենալ. ուսումնարանը պէտք է ընդհանուր լինի այնպէս ինչպէս գիտութեան ճշմարտութիւններն են իսկ ընդհանուր լինելու համար, նա անպատճառ պէտք է չէզոք լինի, որպէս զի Բէլգիան կարողանայ ազատ կերպով սնուցանել այնտեղ իր ապագայ քաղաքացիներին իր ներկայ սահմանադրական կանոնների և խղճի ազատութեան ոգով: Բէլգիան երբէք ցանկութիւն չունէ, կաթոլ.կ, բողոքական, հերձուածով կամ մի այլ դաւանութեան պատկանող կուսակցութիւններ ունենալ. նրան պէտք են քաղաքացիներ ազատ ձգտումներով, ազատ խղճով և ազատ դաղափարներով:

Ահա թէ ինչ է ցանկանում հայրենիքը: Բէլգիան երբէք չի ցանկանայ հռօմայեցի ինտրիգաներ ունենալ, ոչ, նա այդ չի ցանկանայ:

Կեղծաւորութիւններն ու ինտրիգաները այժմ էլ ընթացք չունեն: Այժմ Բէլգիան կամենում է օգուտ քաղել Ֆրանսիական մեծ յեղափոխութենից, և «ազատութեան», «հաւասարութեան» ու «եղբայրսիրութեան» յաւիտենական խօսքերի անջնջելի սկզբունքի վրա նոր քաղաքացիներ պատրաստել:

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Կայսրի առողջութիւնը հետզհետէ կաղդուրվում է. հետևաբար և նրա հարսանիքի յիսնամեայ հանդէսի կարգը ոչինչ փոփոխութեան չի ենթարկվի:

Ցայտնում են, որ այդ յիսնամեայ հարսանիքի հանդիսի (noces d'or) առիթով Գերմանիայի ամեն ծայրերից բաղմաթիւ պատգամաւորութիւններ են պատրաստվում Բէրլին գնալու: Կիսապաշտօնական մի թերթ ցրում է այն լուրը, որ իբր կառավարութիւնը դիտաւորութիւն ունի հարսանիքի տօնախմբութեան առիթով մաքսային ցուցակի հարցի վիճաբանութիւնները յետաձգել մինչև սեպտեմբերի սկիզբը:

Ընդհակառակը մաքսային ցուցակի համար կազմված յանձնաժողովը տակաւին շարունակում է իր աշխատութիւնները և այսօրվայ օրս նա զբաղված է բամբակի վերաբերեալ յօդուածների քննութեամբ: Սրա մասին աւելորդ չենք համարում նկատել, որ յանձնաժողովը, շեղվելով կառավարութեան առաջարկած շաղից, մի քանի բարեկարգութիւններ մտցրեց բամբակի հարցի մէջ:

Եգիպտական հարցի վերաբերութեամբ լրագիրները այնպիսի լուրեր են տարածել, որոնք ահագին յուզմունքներ են յարուցել հասարակական կարծիքի մէջ:

Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ իբր գերմանական կառավարութիւնը դիմել է սուլթանին, խնդրելով, որ նա էլ իր կողմից աղէ խէդիվի վրա, որպէս զի այս վերջինը իր աֆրիկական յամառութեամբ տեղիք չը տա քաղաքական խորամանկ յարաբերութիւնների, որոնց հետևանքը շատ վատ, թերևս և օրհասական (fatal) կը լինի երկու պետութիւնների համար:

Լրագիրները ոչինչ դժուարութիւն չեն կըրում այսպիսի լուրեր մտցնել իրանց թերթերի մէջ. ուղիղ թէ սխալ, ո՞ւմ ինչ փոյթ, բաւական է, որ նրանք համապատասխան լինեն օրակա՛ն հարցին: Մինչդեռ մենք պաշտօնական և աւելի հաւաստի լրագիրներից տեղեկանում ենք, որ Գերմանիան իրան երբէք թոյլ չի տայ իր զորքերի վերաբերութեամբ դիմել մի երրորդ անձի միջամտութեանը: Եւ վերջապէս ինչ հարկաւորութիւն կայ դիմել սուլթանի միջնորդութեանը, երբ հարկ եղած ժամանակ Գերմանիան ունի այնտեղ—Կայիրէում իր ներկայացուցիչը, որի միջոցաւ Գերմանիան ազատ կարող է խօսել ինչ որ կամենայ: Գերմանական մի լրագրի խօսքերով կայսրը իր յիսնամեայ հարսանիքի տօնախմբութեան առիթով, միայն այնպիսի յանցաւորներին պէտք է թողութիւն շնորհէ, որոնք կանաւորված են բացառապէս կայսրի դէմ մեղանչելու համար. բայց այդ նա թողութիւն կը շնորհէ և սպասում զանված զինուորականներին:

«Nordd. Allgemeine Zeitung» լրագիրը յարձակվում է այն լրագիրների դէմ, որոնք պարսաւում են կառավարութեան անհոգութիւնը Նատալից ստացած այն տեղեկութեան մասին, որը յայտնում է, թէ անգլիական Վարրէն զնդապետի մարդիկը յարձակվելով Սաարօմի մէջ գտնված գերմանական միսիոնէրներն կայարանի վրա, կործանել են նրան, և Բրիւն միսիոներին էլ ծեծելով անպատուել են: Վերոյիշեալ լրագիրը պատասխանելով այդ պախարակող լրագիրներին, ասում է, որ ինքը հաստատ աղբիւրներից տեղեկացել է, որ այդ մասին գերմանական կառավարութիւնը դիպլոմատիական բանակցութիւններ է սկսել Անգլիայի հետ, որոնք դեռ ևս ոչինչ որոշ եզրակացութեան չեն հասել:

ԻՏԱԼԻԱ

—

Սիկիլիայից հաղորդում են իտալական զանազան լրագիրներին էմնայի արտավիժման մասին հետևեալ տեղեկութիւնները:

Արտավիժումը տակաւին շարունակվում է նոյնչափ սաստկութեամբ, ինչպէս և նախընթաց օրերը: Ստորերկրեայ աղմուկները անընդհատ ու ահաւոր են: Մարդս դժուարութեամբ է կարողանում շնչել չափազանց ջերմ ու մոխրախառն օդը: Տասը մղոն տարածութեան վրա շարունակ մոխրէ անձրևներ են գալի:

Լավայի ահագին յորձանքները, երեք օր անընդհատ հոսելուց յետոյ, հասան մեծ ճանապարհին որին Պիսչիարօ անուանով կոտրած կամուրջի մօտ ծածկեց կէս մղոն տարածութեամբ: Ճանապարհորդների երթևեկութիւնը բոլորովին դադարած է: Լավան դեռ ճանապարհը կտրելուց առաջ, ծածկեց յիշեալ կամուրջի մօտ գտնված Զիմինիս անուանված մարդու ամբողջ տունը, այգին և պարտէզը, որոնց տարածութիւնը կարելի է մօտաւորապէս 180 մէտր հաշուել: Լավայի այս բազուկը սաստիկ արագութեամբ է հոսում: Նա շուտով կը միանայ Ալկանտարայի հովիտի ընդհանուր մեծ հոսանքին:

Գլխաւոր հոսանքը 800 մէտր լայնութիւն ունի, և եռանկիւնաձև է առաջ գնում: Նա ոչնչացրեց պ. պ. Դօմիդօի և Բանդացցօի կալուածները, և սպառնում է Պալացցօ դքսի կաղնու անտառներին: Նա Ալկանտարա գետից միայն 400 մէտր հեռաւորութեամբ է գտնվում:

Ընդհանուր հոսանքի լայնութիւնը, բարձրութիւնը և արագութիւնը թոյլ են տալի եզրակացնել, որ կրատէրները ամեն մի վայրկեանում 450 խորանարդ մէտր քանակութեամբ լաւա են արտավիժում:

Լավայի բոլոր հոսանքի տարածութեան վրա մրրկախառն այլանդակ ծուխ է բարձրանում: Նրա պաղած կամ քարացած փրփուրների վրա ուշադիր բոլորովին սպիտակ աղ (sel ammoniac) է երևում:

Հետաքրքիրների բազմութիւնը հետզհետէ աւելի ու աւելի մեծ քանակութիւն է ստանում: Վախենում են, որ տեղերի անծանօթութիւնը և նրանց վիճման բազմատեսակ երևոյթների մասին ունեցած անբաւականացուցիչ տեղեկութիւնները, նրանց շատերի համար վտանգաւոր հետևանքներ կունենան:

Այնտեղ գտնված գիտնականները կարծիք են յայտնում, որ վիժումը երկար կը տևի. Պրոֆեսսոր Սիլվէստրի անցել է լավայի հոսանքի միւս կողմը, և հասել է Բանդացցոլերան ստորոտը. նա կամենում է, որ կարելի եղածին չափ կրատէրներից մօտ զննէ այդ երևոյթը:

Կալդարէնա անունով մի կալուածատիրոջ 600 մէտր տարածութեամբ դեղեցիկ այգեստանը, որ դեռ մի օր առաջ բեռնաւորված էր խաղողի թէպէտ տհաս բայց հիանալի ողկոյզներով, իր տիրոջ սրտում սիրուն յոյսեր էր ծնեցնում, այս բոպէիս ոչ այլ ինչ է, բայց եթէ լավայով ծածկված մի ծխաշունչ անապատ: Խեղճ մարդը, որ ինքը որդոց հայր և մի հարուստ բաղդաւոր կալուածատէր էր, մի օրվայ մէջ զրկվեցաւ բոլոր իր կարողութենից:

«Italia» լրագրին հաղորդում են Կատանից, որ Էտնայի մոխիրը մինչև անգամ այդ քաղաքի վրա էլ է թափվում: Ցիշեալ լրագրի թղթակիցը մինչև անգամ մի փոքրիկ ծրարով ուղարկել է իրան խմբագրին այն մոխիրը, որը նամակ գրած ժամանակ թափվել է նրա թղթի վրա:

Բնակիչները մեծ յուզմունքի մէջ են:

Պատգամաւորների ժողովը գրեթէ միաձայն հաւանութեամբ վճռեց 500,000 ֆրանկ յանձնել կառավարութեանը, որպէս զի նա գործադնէ այդ գումարը Պոգետի հեղեղվածների և էտնայի վիժումից վնասվածներին օգնելու:

Յունիսի 7-ից Մէսսինայից հեռագրում են եւրոպական լրագիրներին, որ կրատէրների արտավիժումը զգալի կերպով մեղմացել է, իսկ ստորերկրեայ պայթիւններ և աղմուկներ շատ հազիւ են լսվում:

Լավայի հոսանքը նմանապէս մեղմացել է: Այժմ միայն գլխաւոր կրատէրի վրա է ծուխ երևում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները հրաւիրեցին խէդիվին ընտրութիւն անել այս երկու դրութիւնների մէջ, այն է կամ կամաւորապէս հրաժարվելով գահից, յանձնել նրան Տէվֆիկին, կամ թէ ընդունել արևմտեան պետութիւնների բռնի միջամտութեամբ հրաժարեցնելը, և կամ թէ թիւրքական ֆիրմանի զօրութեամբ գահաղուրկ վինելը: Խէդիվը մի օր ժամանակամիջոց խնդրեց, որպէս զի բաւականութիւն տայ իր պարտատէրերին, որոնք բաւարարութիւն են պահանջում իրանց իրաւունքներին, և որպէս զի իր թանկագին քարերի գրաւականով փող փոխ առնի տեղացի բանկիրներից: Խէդիվը յայտնեց, որ երբ Բօշիրը կը վճարի պետական կալուածների գրաւականով ստանալիք փոխառութեան մնացորդը, և երբ պարտատէրերը բաւականութիւն կը լինեն ստացած, այն ժամանակ նա կը հրաժարվի գահից:

—Կապի դաղթականութենից հաղորդում են, որ պրինց Լուի Նապոլէօն զուլուսների դէմ եղած հետախուզութեան ժամանակ սպանված է: Սիդնէյ սրա մասին յայտնեց նախկին կայսրուհի Եվգենիային:

—Ֆրանսիայի պարլամէնտի խառն ժողովը 549 ձայների բազմութեամբ 20-ի դէմ ընդունեց այն ծրագիրը, որի զօրութեամբ փոխոխութեան պէտք է ենթարկել սահմանադրութեան ինները դ յօդուածը, որը որոշում է, որ ֆրանսիական կենտրոնական վարչութիւնը պէտք է վէրայում մնայ:

—Բոլգարական իշխանը Լոնդոնում յայտնեց, որ նա մտադիր է բոլգարական բանակի զինուորների թիւը 80,000-ի հասցնել: Այդ բանը դժգոհութիւն պատճառեց անգլիացիներին:

«ՄԹԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 11|23 յունիսի: Խէդիվը հրաժարվում է գահը թողնելուց, և անգլիական ու ֆրանսիական հիւպատոսներին առաջարկեց, որ նրանք սուլթանին դիմեն: Միջոցներ են գործադնում, որ վճարեն պարտատէրերին, որոնց համար վճռված է, որ նրանք պէտք է կառավարութենից ստանան իրանց պարտքերը: Գերմանական և ֆրանսիական հիւպատոսները ուղևորվում են այստեղ, որպէս զի պաշտպանեն Ֆրանսիայի և Անգլիայի պահանջները: Պալատ-փաշան առանձին յանձնարարութեամբ ուղևորվել է դէպի Կ. Պոլիս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունիսի: Պետական բանկի 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր., չորրորդ 95 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 242 ր., երկրորդ 236 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92⅝ ր., երկրորդ 92⅝ ր., ոսկի 8 ր. 40կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 23 9/16 պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 201 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 248 ֆր. 25 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА

ОБЪЯВЛЕНІЕ

Съ 9 Апрѣля будутъ въ движеніе товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Поѣздъ № 5					Поѣздъ № 6				
Станціи.	Приходъ.		Отходъ.		Станціи	Приходъ		Отходъ	
	ч.	м.	ч.	м.		ч.	м.	ч.	м.
			ве	чера				попол	удни
Поти	—	—	6	45	Тифлисъ	—	—	12	56
Ріонъ	1	25	2	20	Гори	4	15	4	35
Квирили	3	46	4	39	Михайлово . . .	6	25	6	45
Михаилово . . .	9	36	10	06				по по	луноч
			попо	лудні	Квирили	11	44	12	15
Гори	11.	55	12	20	Ріонъ	1	24	1	54
Тифлисъ.	3	51	—	—	Поти	6	35	—	—

Пасажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.

ՑՈՒՑԱԿ

Ջալօղը երկսեռ ուսումնարանաց նուիրատուների

Մէք. Խանաղեանց 200 ռուբլ, Եգ. Քալանթարեանց 300 ր., Յար. Պապօյեանց 300 ր., Մկր. Խանաղեանց 200 ր., Սար. Տէր-Գրիգորեանց 200 ր., Սարգ. Յակոբեանց 200 ր., Մէք. Մատթէոսեանց 200 ր., Բար. Մարտիրոսեանց 200 ր., Նաւ. Ջաղինեանց 200 ր., Մով. Պողոսեանց 200 ր., Զաք. Բախչինեանց 200 ր., Դան. Դաւթեանց 200 ր., Աղ. Սահակեանց 200 ր., Յովհ. Սահակեանց 200 ր., Սարիբ. Սահակեանց 200 ր., Նիկ. Հայրապետեանց 200 ր., Յով. Վարդազարեանց 200 ր., Աս. Իսրայէլեանց 200 ր., Աղ. Իսրայէլեանց 200 ր., Եգ. Նացվալեանց 150 ր., Սար. Նացվալեանց 100 ր., Պարֆ. Գրօզդով 100 ր., Դան. Ջիլթեանց 100 ր., Աղ. Ջիլթեանց 100 ր., Մէք. Իսրայէլեանց 100 ր., Մկր. Իսրայէլեանց 100 ր., Լիւդ. Իսրայէլեանց 100 ր., Աս. Ջալալեանց 100 ր., Յով. Դաւթեանց 100 ր., Աղ. Յովհաննէսեանց 100 ր., Սարիբ. Աղաջանեանց 100 ր., Ներ. Առաքելեանց 100 ր., Մկր. Էնֆիաճեանց 100 ր., Արշ. Մարտիրոսեանց 100 ր., Յովհ. Իսրայէլեանց 100 ր., Յար. Յակոբեանց 100 ր., Բարս. Ջալալեանց 100 ր., Աղէք. Բաբաջանեանց 100 ր., Սարգ. Նիկողոսեանց 100 ր., Աղէք. Այվազեանց 100 ր., Ստ. Ջաղինեանց 100 ր., Ներ. Դունիամալեանց 100 ր., Սահ. Դունիամալեանց 100 ր., Սարգ. Աւէտեանց 100 ր., Մելք. Անանեանց 100 ր., Գասպ. Անանեանց 100 ր., Սահ. Սահակեանց 100 ր., Աղ. Քօչարեանց 100 ր., Տիգ. Տէր-Դաւթեանց 100 ր., Յակ. Ք. Շահինեանց 100 ր., Հայր Արտաշէսեանց 100 ր., Հայր Տէր-Յակոբեանց 100 ր., Սար. Ջիլաւեանց 100 ր., Գրիգ. Խահակեանց 100 ր., Արշ. Դաւթեանց 100 ր., Սօս. Յարութիւնեանց 100 ր., Աղէք. Ղևոնդեանց 50 ր., Աղաջ. Ղևոնդեանց 50 ր., Սին. Գրիգորեանց 50 ր., Գրիգ. Ջաղինեանց 50 ր., Դաւ. Աղաջանեանց 50 ր., Մելք. Գրիգորեանց 50 ր., Գաբ. Նազարեանց 50 ր., Սարգ. Սարիբէկեանց 50 ր., Արշ. Աղաջանեանց 50 ր., Գէ. Եղիազարեանց 50 ր., Թադ. Անտոնեանց 50 ր., Աղէք. Յովակիմեանց 50 ր., Կար. Ղարագեօզեանց 50 ր., Գէ. Յարութիւնեանց 50 ր., Մով. Սարիբէկեանց 50 ր., Խուր. Սարգսեանց 50 ր., Գէ. Անանեանց 50 ր., Գէ. Սահակեանց 50 ր., Գրիգ. Աղաբաբեանց 50 ր., այրի Հէրիքնազ Նիկողոսեանց 50 ր., Դար. Խալաթեանց 50 ր., Ռուշ. Գրիգորեանց 50 ր., Գէ. Բանանեանց 50 ր., Մկր. Այվազեանց 50 ր., Մնաց. Ջաղինեանց 50 ր., Գէ. Բունիաթեանց 50 ր., Գէ. Ղարաքէշիշեանց 50 ր., Եփ. Աստուածատուրեանց 50 ր., Դան. Բալիխինեանց 50 ր., Ես. Ք. Աբովեանց 50 ր., Մէք. Եղիազարեանց 50 ր., Սար. Տէր-Յակոբեանց 50 ր., Գասպ. Ղևոնդեանց 50 ր., Վարդ. Ղևոնդեանց 50 ր., Յար. Շամբարեանց 50 ր., Սահ. Գոլծակալեանց 50 ր., Ղազար Արտակէսեանց 50 ր., մարդկանց նուէրի գումարն 9600 ր.։

Անուանք նուիրատու տիկնաց

Կատ. Սահակեանց 30 ր., Հեղ. Խանաղեանց 20 ր., Փապ. Խանաղեանց 20 ր., Աղ. Քալանթարեանց 30 ր., Եզ. Տէր-Գրիգորեանց 20 ր., Նատ. Մատթէոսեանց 20 ր., Ովս. Սիմոնեանց 20 ր., Սար. Դաւթեանց 20 ր., Մագ. Մարտիրոսեանց 20 ր., Նաթ. Պապօյեանց 30 ր., Հռ. և Նադ. Վարդազարեանց 20 ր., Ան. Իսրայէլեանց 20 ր., Նատ. Հայրապետեանց 20 ր., Հռ. Պողոսեանց 20 ր., Մար. Ջաղինեանց 20 ր., Խան. Ջիլթեանց 20 ր., Մար. Սահակեանց 20 ր., Թամ. Գրիգորեանց 15 ր., Գիւլ. Նացվալեանց 20 ր., Մարգ. Արտաշեանց 20 ր., Տիր. Աբովեանց 20 ր., Լիզ. Տէր-Յակոբեանց 20 ր., Խան. Սահակեանց 20 ր., Եղ. Թահիրեանց 15 ր., Տիր. Նոյեմ Շահինեանց 25 ր., Նատ. Սահակեանց 20 ր., Մար. Բախչինեանց 20 ր., Կէկ. Դունիամալեանց 20 ր., օր. Վիրգինէ Տէր-Դաւթեանց 10 ր., Եկ. Մեսսիկեանց 10 ր., Կէկ. Աղաջանեանց 10 ր., Օգ. Էնֆիաճեանց 10 ր., Նէն. Իսրայէլեանց 10 ր., Նատ. Այդինեանց 10 ր., Սար. Իսրայէլեանց 10 ր., Մարգ. Նացվալեանց 10 ր., Քալի Յովհաննիսեանց 10 ր., Դայ. Ջաղինեանց 10 ր., օր. Խան. Ջաղինեանց 10 ր., Հէր. Բաբաջանեանց 10 ր., Մարգ. Յարութիւնեանց 10 ր., Կատ. Սահակեանց 10 ր., Գեօզ. Առաքելեան 10 ր., Ան. Սիմոնեանց 10 ր., Շամ. Անանեանց 10 ր., Փարի. Իսրայէլեանց 10 ր., Հռ. Դաւթեան 10 ր., Վարդ. Ջիլաւեանց 10 ր., Խամբ. Դաւթեանց 10 ր., Եկ. Յակոբեանց 10 ր., Եսթ. Իսրայէլեանց 10 ր., Նատ. Մարտիրոսեանց 10 ր., Շող. Գրիգորեանց 10 ր., Օս. Անանեանց 10 ր., Հռ. Ռոստոմեանց 10 ր., Նատ. Դանիէլեանց 10 ր., Անմ. Զալալեանց 10 ր., Սօֆ. Սահակեանց 10 ր., Քեթ. Գրօզդով 10 ր., օր. Հերիք. Մուրատեանց 10 ր., Հերիք. Բալոյեանց 10 ր., Մարմար Գրիգորեանց 10 ր., Մարգ. Ջալալեանց 10 ր., Մարգ. Աւետեանց 10 ր., Թագ. Աստրեանց 10 ր., Սօֆ. Յարութիւնեանց 5 ր., Նուշ. Անանեանց 5 ր., Համաս. Աղաջանեան 5 ր., Անմ. Սահակեանց 5 ր., Մագ. Սարիբէկեանց 5 ր., Սանդ. Գրիգորեանց 5 ր., Ովսան. Խալաթեանց 5 ր., Մար. Անտոնեանց 5 ր., Նէն. Ղարագեօզեանց 5 ր., Ան. Քանանեանց 5 ր., Հռիփ. Գրիգորեանց 5 ր. Վար. Կարօյեանց 5 ր., Թէլ. Պետրոսեանց 5 ր., Եղ. Աղաբաբեանց 5 ր., Եղ. Սարիբէկեանց 5 ր., Նուբ. Բունիաթեանց 5 ր., Սու. Նազորեանց 5 ր., Նատալիա Աղաջանեանց 5 ր., Թել. Եղիազարեան 5 ր., Թամ. Կարօյեանց 5 ր., Մարգ. Ջաղինեանց 5 ր., Մարգ. Ղևոնդեանց 5 ր., Ան. Ստեփանեանց 5 ր., Նատ. Այվազեանց 5 ր., Եղ. Յակոբեանց 20 ր., Կանանց նուէրի գումարն է 1095 ր., Մարդկանց նուէրի գումարը 9600 ր., բոլոր գումարն է 10695 ր.։

Լօռեցի

ԱՄԱՐԱՑԻՆ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Ամարային արձակուրդների ժամանակ պարապել ցանկացողներուն ընդունում և պատրաստում են թէ որ և է դպրոց մտնելու և թէ վերաքննութեան համար։

Պարապմունքը կը սկսուի յունիսի 11-ին և կը վերջանայ օգոստոսի 20-ին։

Պարապել ցանկացողները կարող են դիմել «Տարրական դպրոցը» Վեղեմինովկի փողոցը պ. Իշխան Ամատունու տանը № 11.

ՄԻՐԱՅԻԼԵԱՆ ԿԱՄՈՒՐՋԻ մօտ Զուբալովի տան մէջ գտնված Ն. Ա. ԳՕՄԱՐԱՅԿՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գրաւով և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, գընում է առևտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՄՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Մի և նոյն տեղը գտնվում է «ԽՈՐՀՐԴԱԿՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ,» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ ՎԱՃԱՌՅԻՆ ՎԱՐՔԱԿԱՆ և ԱՌԵՎՏՐԱԿԱՆ գործերի մասին։ Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՒՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ։ Ի նկատի ունենալով «ԳՐԱՄԵՆԵԱԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՇԱՏ աշխատանքները ցանկացողները հրաւիրվում են ԸՆԿԵՐԱՆԱԼ։ Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը։ 2—5

Ներկայ 1879 թ. յուլիսի սկզբից, տէրութեան թոյլտուութեամբ, Թիֆլիսի մէջ հրատարակվելու է ռուս «Кавказъ» լրագրի չափով, քաղաքական—գրականական շաբաթաթերթ «Ճշխատանք» ռուս և հայ լեզուներով հետևեալ պրոգրամմով։

1) Դատաստանական ժամանակագրութիւն.

2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն. թէ տնտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից։

3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ. լինեն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ։ Քննադատութիւն ռուս, հայ և օտարազգի գրականութիւնների։

4) Քաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ։

5) Մանր լուրեր։

6) Մասնաւոր յայտարարութիւններ։

«Ճշխատանք» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, Թիֆլիսում, առանց տուն հասցնելու . . . . . 5 ռուբլ.

Տուն հասցնելով . . . . . 5 ր. 50 կ.

Ուսիոյ զանազան քաղաքներ ղրկելով . . . . . 6 ռուբլ։

Փոստային դաշնակցութեամբ ղրկելով արտասահման . . . . . 7 ռուբլ։

Ստորագրութիւնն ընդունվում է Թիֆլիս Կենտրոնական գրավաճառանոցում։

«Ճշխատանք»-ի համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «Ճշխատանք» լրագրի խմբագրին այս հասցէով. Григорію Тер-Меликсетову, редактору газеты „Трудъ“, въ Сололакахъ, на Сололакской ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Галустова подъ № 110.

Նիւթեր և անվշակ յօդուածներ «Ճշխատանք»-ի խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս ռուս, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով։

Խմբագիր-Հրատարակող Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան։

Երևանեան հրապարակի վրա ԹԱՄԱՄՇԵՎԻ կարավանսարայի դէմուդէմը № 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԴԱՀԼԻՃ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտ-երեկո սամովարով. դահլիճը մի բակօն ունի իր առաջ։ Գինն է ամսական 40 ռուբլ։ Բացի դահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆԵԱԿՆԵՐ կարասիքով, ծառայով, սամովարով և լուսաւորութենով. այդ սենեակները ամսական արժեն 25, 20 և 15 ռուբլ։ Այդ սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել։ Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միրգ ծախող ՅԱԿՈՎԲԻՆ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ

ՋԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ։

Գրավաճառ Զաք. Գրիգորեանցը ստանալով «Թորոս Լևոնի» հեղինակ—մեծա. պ. Մերենցից տպագրութեան իրաւունքը նորա նոր աշխատութեան, որոյ վերնագիրն է «ԵՐԿՈՒՆՔ 9-Դ ԴԱՐՈՒ» և որոյ նիւթը վեր է առած հայոց պատմական կեանքից իններորդ դարի,—յանձնեց տպարանին և շուտով լոյս կը տեսնի։

Գրքի արժանաւորութեան մասին խօսելն այժմ աւելորդ եմ համարում, ով որ ծանօթ է պ. Մերենցի գրուածների հետ, նա կը հասկանայ թէ ինչ հոգով և ինչ տեսակ գրուածք է։ Գինն լինելու է 1 ռուբլի թէ Տփխիսում և թէ օտար քաղաքացոց համար։

50 հատ առնողի համար հարիւրին 20% զիջումն կը լինի։ Նոյն տեղ վաճառվում են

	Ռուբլ	Կոպ.
1. Երկաթէ դիմակով մարդը և Աւետիք պատրիարք հայոց . . . . գինն է	1 ր.	—
2. Շիշմանեանի — Հրատարակութեանց հաւաքմունք . . . . . —	1 ր.	15
3. Բաբայեան—Ուսումնարանի առողջապահութեան հարցեր . . . . . —	1 ր.	—
4. Մանդինեան—Կրօնք-հոգի բանական հետազօտութիւն . . . . . —	1 ր.	—

ՓՕՓԻ, յունիսի 9-ին։ Կիրակի օր, յունիսի 19-ին այստեղից դուրս գալու է, եթէ եղանակը աջող լինի ուղևորվելով դէպի Կ. Պոլիս և Մարսէյլ Ֆրանսիական «Meuse» շոգենաւը, որ պատկանում է «Պակէ» ընկերութեանը և որի կապիտանն է պ. Նէլ։

ԲԱՐՁՐ ՈՒՍՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՄԻ ՕՖԻՑԵՐ, որ օտար լեզուներ էլ գիտէ, ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է աշակերտներին ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ գիմնազիաների և պրոգիմնազիաների համար։ ՎՃԱՐԸ ՁԱՓԱՒՈՐ Է։ Հասցէն կարելի է թողնել «Մշակի» խմբագրատանը, կամ անցնել Արտիլերիսկայա փողոց, տուն № 14.

1—3

ДВОЙНАЯ ИТАЛІАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ տալիս է ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասեր (բանկի, ֆաբրիկի, ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿՕՄԱՆԻՈՆԵՐԻ, երկաթուղու և այլն) հարցնել էֆէնճիանցի գրատանը կամ դիմել Թիֆլիսի Կազեօնայա Պալատը ուղղակի պ. Յակոբ Տէր-Յակոբեանցին։

ՅՈՒՆԻՍԻ 6-ից 1879 թ.

Նոր բացված է ԳԱՖԻԵԱՆՑԻ մագազին։ Մեծ ընտրութիւն ռուսաց և հօլանդական կտաւի և սեղանի ծերմակեղէնի։ Կան նաև զանազան կահ կարասիներ, մոդային, մանուֆակտուրական և այլ տպրանքներ։

Մագազինը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ հրապարակի վրա Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան բնակարանի տակ, Խարազովի տանը։ 1—10

Дозволено Цензурою 13 Іюня 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона